

«Հորս հաստատ դուր կգար այս ցուցադրությունը: Գիրք շատ էր սիրում, տան մեծ մասը գրքերն էին զբաղեցնում, ու փոքր ժամանակ ես սրտնեղում էի, որ խաղալու տեղ չունեմ, գրքերի հոտն էլ չէի սիրում, թեև հենց տան մթնոլորտը, հորս գրքասիրությունը նպաստեց, որ ես ընթերցասեր դառնամ», - խոստովանեց Գևորգ Էմինի որդին՝ թարգմանիչ, Հայաստանի գրողների միության անդամ, ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ Արտաշես Էմինը Հայաստանի ազգային գրադարանում Գևորգ Էմինի 100-ամյակին նվիրված գրականության ցուցադրության բացման ժամանակ:



Թամանյանական մասնաշենքի մեծ ցուցասրահում ներկայացված են Գևորգ Էմինի ստեղծագործությունների մի շարք ժողովածուներ, նրա գործերի՝ ամենատարբեր լեզուներով



թարգմանությունները, գրողի անտիպ ձեռագրերի օրինակներ, լուսանկարները, Էմինի ընթերցմամբ վինիլ ձայնապնակներ և ուշագրավ այլ նյութեր: Այցելուները կարող են տեսնել բանաստեղծի՝ առաջին գրքից՝ 1940 թ. Երևանում տպագրված «Նախաշավիղ» ժողովածուից մինչև 1997-ին Հալեպում լույս տեսած «Շատ չեղա՞վ, Աստված» գիրքը: Վերջինս, ինչպես նշեց Արտաշես Էմինը, հետխորհրդային շրջանում Գևորգ Էմինի միակ տպագրված գիրքն է, այն էլ՝ Հայաստանի

սահմաններից դուրս հրատարակված: Սակայն Գևորգ Էմինը հսկայական անտիպ ձեռագրեր ունի: Արտաշես Էմինը նշեց, որ ներկայումս ինքն ու գրականագետ Արքմենիկ Նիկողոսյանն զբաղված են գրողի արխիվի ուսումնասիրմամբ և դասակարգմամբ:

Գրականագետ Արքմենիկ Նիկողոսյանն անդրադարձավ Էմինի ձեռագրերի հարուստ արխիվին, որը ներառում է բանաստեղծի անտիպ գրական երկերը, աշխարհի տարբեր ծայրերից, նշանավոր մարդկանցից ստացած նամակների մեծ հավաքածուն, «այնպիսի հարուստ ֆոտոարխիվ, որ բոլոր թագարանները կերպեն ունենալ», - նշեց նա:



Գրականագետն ընդգծեց, որ արխիվն ուսումնասիրելիս նորովի է բացահայտել Գևորգ Էմինին. «մի հզոր անատականություն, որն ինքնին էպոխա է»: Մեր աչքերի առջև հառնում է բոլորովին այլ՝ մինչ այժմ մեզ անհայտ գրող ու մտածող: Եվ որ ամենակարևորն ու ամենատրախալին է, այդ արխիվում պահվող նյութերը հերքում են Էմինի մասին տարիներ շարունակ շրջանառված բանասարկություններն ու զրպարտանքները: Բարձր գնահատելով Գևորգ Էմինի գրական ժառանգությունը՝ Արքմենիկ Նիկողոսյանն առանձնահատուկ ուշադրություն դարձրեց Էմին մարդու քաղաքացիական համարձակ պահվածքին, անարդարության դեմ նրա անհաշտ պայքարին: Բավական է միայն նշել, թե ինչպես է 18-ամյա Գևորգ Էմինը (Կառլեն Մուրադյանը), իր կյանքն ու ստեղծագործական ապագան վտանգելով, պայքար մղել Եղիշե Չարենցին արդարացնելու, նրա ստեղծագործությունները տպագրելու համար, տեր կանգնել Չարենցի ժառանգներին, որդեգրել Արփենիկ Չարենցին:



Միջոցառման գեղեցիկ ամփոփում էր Գ. Էմինի անվան թիվ 182 ավագ դպրոցի սաների ասմունքը. նրանք արտասանեցին սիրելի գրողի բանաստեղծություններից: